



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
վարչական դատարանի վճիռ
Նախագահող դատավոր Կ. Բաղդասարյան

Վարչական գործ N° ՎԴ/2534/05/13

11 փետրվարի 2014 թվական

քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանը
հետևյալ կազմով (այսուհետև՝ Վերաքննիչ դատարան)
Նախագահող դատավոր Աշոտ Աբովյան,
դատավոր Արթուր Առաքելյան,
դատավոր Գալուստ Ղարիբյան,



մասնակցությամբ՝

բողոք բերած անձ, գործով հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպության, ի դեմս ներկայացուցիչ Գևորգ Հայրապետյանի,

ըստ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցի, ընդդեմ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով երաշխավորված տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքների խախտման փաստը ճանաչելու, որպես հետևանք՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության 11.02.2013 թվականի թիվ 194-4 և 07.03.2013 թվականի թիվ 194-8 տեղեկություն ստանալու գրավոր հարցումներով փնտրվող սպառիչ տեղեկատվություն տրամադրելուն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությանը պարտադրելու պահանջների վերաբերյալ, N° ՎԴ/2534/05/13 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի վճռի դեմ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության վերաքննիչ բողոքի դմբաց դատաքննության արդյունքում կայացրեց ստորև ներկայացված որոշումը:

I. ՆԿԱՐԱԳՐՎԿԱՆ ՄԱՍ

1. Դատավարական գործընթացի մասին

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում (այսուհետև՝ վարչական դատարան) 2013 թվականի ապրիլի 5-ին ստացվել է «Ինֆորմացիայի

ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետև՝ Կազմակերպություն, կամ՝ Հայցվոր, կամ՝ Բողոքաբեր) ներկայացուցիչ Քնորդ Հայրապետյանի հայցադիմումն ընդդեմ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության (այսուհետև՝ Ծառայություն, կամ՝ Պատասխանող)՝ Կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով երաշխավորված տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքների խախտման փաստը ճանաչելու, որպես հետևանք՝ Կազմակերպության 11.02.2013 թվականի թիվ 194-4 և 07.03.2013 թվականի թիվ 194-8 տեղեկություն ստանալու գրավոր հարցումներով փնտրվող սպառիչ տեղեկատվություն տրամադրելուն Ծառայությանը պարտադրելու պահանջների վերաբերյալ: Հայցադիմումին կից ներկայացվել է միջնորդություն՝ հայցադիմումի համար պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու մասին:

Վարչական դատարանի (նախագահող դատավոր Կ. Բաղդասարյան) 2013 թվականի ապրիլի 12-ի որոշմամբ վերոնշյալ միջնորդությունը բավարարվել է՝ հետաձգվել է հայցադիմումի համար պետական տուրքի վճարման ժամկետը մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելը, և հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Մայիսի 15-ին ստացվել է Ծառայության պատասխանը հայցադիմումին:

Հուլիսի 24-ին տեղի ունեցած դատական նիստում կայացված Վարչական դատարանի որոշմամբ գործը նշանակվել է դատաքննության, իսկ 2013 թվականի սեպտեմբերի 19-ի վճռով (այսուհետև՝ Վճիռ) վճռվել է՝

««Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցն ընդդեմ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով երաշխավորված տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքների խախտման փաստը ճանաչելուն, որպես հետևանք՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությանը «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության 11.02.2013 թվականի թիվ 194-4 և 07.03.2013 թվականի թիվ 194-8 տեղեկություն ստանալու գրավոր հարցումներով փնտրվող սպառիչ տեղեկատվություն տրամադրելու պահանջների մասին, մերժել:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունից ՀՀ պետական բյուջեի օգտին բռնագանձել 4.000 (չորս հազար) դրամ, որպես հետաձգված պետական տուրքի գումար:»:

2013 թվականի հոկտեմբերի 18-ի փոստային առաքմամբ (Վերաքննիչ դատարանում ստացվել է հոկտեմբերի 21-ին) ստացվել է Կազմակերպության ներկայացուցչի վերաքննիչ բողոքը (այսուհետև նաև՝ բողոք) Վճռի դեմ: Բողոքին կից ներկայացվել է միջնորդություն՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին:

Գործը Վերաքննիչ դատարանում ստացվել է բողոքը վարույթ ընդունելու հարցի լուծումը դատական կազմին է հանձնարարվել 2013 թվականի հոկտեմբերի 25-ին:

Վերաքննիչ դատարանի 2013 թվականի նոյեմբերի 18-ի որոշմամբ վերոնշյալ միջնորդությունը բավարարվել է, բողոքն ընդունվել է վարույթ և դատաքննության է նշանակվել 2014 թվականի հունվարի 21-ին:

2013 թվականի նոյեմբերի 22-ին ստացվել է Ծառայության պատասխանը բողոքին:

2014 թվականի հունվարի 21-ի դատական նիստին ներկայացել է մասնակցել է միայն Կազմակերպության ներկայացուցիչը: Այդ նիստում բողոքով դատաքննությունն

ավարտվել և հայտարարվել է բողոքն ըստ էության լուծող որոշման հրապարակման օրը՝ 2014 թվականի փետրվարի 11, ժամը և վայրը:

2. Բողոքի հիմքերի, հիմնավորումների և պահանջի նկարագրությունը

Որպես գործի դատավարական նախապատմություն, ներկայացվել է հետևյալը:

1.1. Կազմակերպությունը 2013 թվականի փետրվարի 11-ի թիվ 194-4 և 2013 թվականի մարտի 7-ի թիվ 194-8 տեղեկություն ստանալու գրավոր հարցումներով պահանջել էր Ծառայությունից տրամադրել տեղեկություններ «ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին» համաձայնագրի (այսուհետև՝ Համաձայնագիր) շրջանակներում գաղտնիության աստիճանը վերանայված տեղեկությունների մասին, գաղտնագրված տեղեկությունների տրամադրման մասին տեղեկատվություն, ինչպես նաև Համաձայնագրի պատճենը: Ծառայությունը տրամադրել է թերի պատասխան՝ պատասխան չի տվել հարցումներով առաջադրված հարցերին: Սույն հայցով խնդրվում է Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքների խախտման փաստի ճանաչում և տեղեկություն ստանալու իրավունքների վերականգնում: 05.04.2013 թվականին դիմել են Վարչական դատարանին՝ վիճարկելու համար Ծառայության պատասխանի իրավաչափությունը:

1.2. Դատարանից խնդրել են ճանաչել Կազմակերպության՝ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված՝ տեղեկություն ստանալու իրավունքի խախտման փաստը:

1.3. Իրավունքի խախտման փաստը ճանաչելու դեպքում, որպես հետևանք, խնդրել են պարտավորեցնել Ծառայությանը՝ տրամադրել Կազմակերպության 2013 թվականի փետրվարի 11-ի թիվ 194-4 և 2013 թվականի մարտի 7-ի թիվ 194-8 տեղեկություն ստանալու գրավոր հարցումներով փնտրվող սպառիչ տեղեկատվություն:

1.4. Վարչական դատարանը 19.09.2013 թվականին վճռել է մերժել հայցը:

Որպես բողոքի հիմքեր և փաստարկներ, իրավունքի նորմերի խախտումներ, որոնք կարող են ազդել գործի ելքի վրա, ներկայացվել է հետևյալը:

2.1. 2011 թվականի հոկտեմբերի 18-ին Սանկտ Պետերբուրգում ստորագրվել է Համաձայնագիրը, որն ստորագրել է նաև Հայաստանի Հանրապետությունը:

2.2. Կազմակերպությունը տեղեկություն ստանալու հարցումներով Ծառայությունից խնդրել էր տրամադրել Համաձայնագրի շրջանակներում գաղտնիության աստիճանը վերանայված տեղեկությունների մասին հետևյալ տեղեկությունները՝

2.2.1. Ո՞ր տեղեկությունների գաղտնիության աստիճանն է վերանայվել:

2.2.2. Ովքե՞ր կարող են դիմել գաղտնագրված տեղեկություններն ստանալու համար:

2.2.3. Գաղտնագրված տեղեկությունները ո՞ր մարմնից կարելի է ստանալ:

2.2.4. Խնդրում են տրամադրել Համաձայնագրի պատճենը:

2.3. Ծառայությունից ստացված պատասխան գրություն ունեցել է հետևյալ բովանդակությունը.

««ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին» համաձայնագիրը սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո, համաձայնագրի պահանջների համաձայն, գաղտնի տեղեկությունների կրիչների գաղտնագրվածումն իրավասու մարմինների փոխադարձ համաձայնությամբ կիրականացվի Կողմ հանդիսացող պետությունների կազմակերպությունների կողմից՝ ազգային օրենսդրությանը համապատասխան:»:



2.4. Կազմակերպության համար Ծառայության պատասխանի բնույթը միանշանակ չի եղել. արդյոք, այն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի իմաստով մերժում է, հղում, թե բովանդակային պատասխան: Գտել են, որ յուրաքանչյուր դեպքում Ծառայությունը տրամադրել է ոչ իրավաչափ պատասխան, ուստի, Վարչական դատարան ներկայացված հայցադիմումով Ծառայության պատասխանի իրավաչափությունը վիճարկել են որպես բովանդակային պատասխան, որպես մերժում կամ որպես հղում (հայցադիմումի 4.1.-4.3. և 4.6. կետեր):

2.5. Վարչական դատարանը Վճռում նշել է. «... Հայցվորի կողմից կատարված հարցումների ժամանակ և այդ հարցումների պատասխան տալու ժամանակ պատասխանողը համաձայնագրով դեռևս չէր կարող կրել որևէ իրավունք կամ պարտականություն, կամ՝ այլ կերպ ասած, վերը նշված ժամանակահատվածում պատասխանողն օրենքով սահմանված կարգով չէր հանդիսանում Հայցվորի կողմից փնտրվող տեղեկատվությունը տնօրինող մարմին, հետևաբար, օրենքով սահմանված կարգով չէր կարող տրամադրել փնտրվող տեղեկատվությունը՝ սահմանափակված լինելով ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի՝ միայն Սահմանադրությամբ կամ օրենքներով սահմանված կարգով գործողություն կատարելու սահմանադրական կանոնով: Հետևաբար, ՀՀ վարչական դատարանն իրավաչափ է համարում պատասխանողի կողմից Հայցվորի հարցման կապակցությամբ տրված պատասխանն առ այն, որ «ԽՍՀՄ գոյության ժամանակաշրջանում գաղտնագրված տեղեկությունների գաղտնիության աստիճանի վերանայման կարգի մասին» համաձայնագիրը սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո, համաձայնագրի պահանջների համաձայն, գաղտնի տեղեկությունների կրիչների գաղտնագրծումն իրավասու մարմինների փոխադարձ համաձայնությամբ կիրականացվի Կողմ հանդիսացող պետությունների կազմակերպությունների կողմից՝ ազգային օրենսդրությանը համապատասխան»:

2.5.1. Այսպիսով, Վարչական դատարանն արձանագրել է, որ հարցմամբ դիմելու պահին, Սահմանադրության 5-րդ հոդվածի ուժով, Ծառայության լիազորություններից դուրս էր հարցմամբ խնդրված տեղեկությունների տրամադրումը: Նման դեպքերում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ կետը սահմանում է, որ, «եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին...»: Սակայն, Ծառայությունը պատասխան գրություններով չի հայտնել, որ խնդրվող տեղեկատվության տրամադրումն իր լիազորության շրջանակներից դուրս է, ինչը ոչ իրավաչափ է: Այդ մասին հայտնել են դատարանին հայցադիմումով (հայցի 3.6. և 4.1.1., 4.6. կետեր), ինչպես նաև դատաքննության ընթացքում նշել են, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ կետի պահպանմամբ պատասխան տրամադրելու դեպքում Ծառայության պատասխանն իրենք կհամարեին պատշաճ պատասխան, սակայն Ծառայությունը տրամադրել է օրենքի վերոհիշյալ հոդվածին չհամապատասխանող պատասխան՝ խախտելով Կազմակերպության՝ պատշաճ պատասխան ստանալու իրավունքը: Այս ամենին Վարչական դատարանը չի անդրադարձել, ավելին, չի գնահատել Ծառայության պատասխան գրությունները «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ կետի պահպանման տեսանկյունից, այնինչ այդ մասին նշվել է հայցադիմումում:

2.6. Վարչական դատարանը Վճռում նշել է. «Ինչ վերաբերում է Համաձայնագրի պատճենը տրամադրելուն, ապա ՀՀ վարչական դատարանը հարկ է համարում նշել, որ «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի, 46-րդ հոդվածի 1-ին մասի և 49-րդ հոդվածի պահանջների համաձայն, միջազգային պայմանագրի նույնական հայերեն տեքստը հաստատվում է ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից, ՀՀ միջազգային պայմանագրի գրանցման միասնական գրանցամատյանը վարում է ՀՀ արտաքին գործերի նախարարությունը: Այսինքն՝ վերը նշված իրավանորմից երևում է, որ ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից է հրապարակվում «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի

պաշտոնական տեղեկագիրը»: Այս հիմքով Վարչական դատարանը մերժել է նաև սպառիչ տեղեկատվություն տրամադրելու պահանջի մաս կազմող՝ Համաձայնագրի պատճենը տրամադրելու վերաբերյալ իրենց պահանջը:

2.6.1. Գտնում են, որ այս դեպքում ևս Ծառայությունը չի պահպանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ կետի պահանջները, այն է՝ պատասխան գրությամբ Կազմակերպությանը չի հայտնել, որ չունի փնտրվող տեղեկությունները, իսկ Վարչական դատարանը չի անդրադարձել դրան և չի գնահատել Ծառայության պատասխան գրությունները «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ կետի այս պահանջի տեսանկյունից, այնինչ, այդ մասին նույնպես նշվել է հայցադիմումում:

2.6.2. Ավելին, այն, որ ՀՀ արտաքին գործերի նախարարությունն է ունեցել Համաձայնագրի օրինակը, դատարանին հայտնել է Պատասխանողը հայցադիմումի պատասխանով: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն, փնտրվող տեղեկատվությունը չունենալու կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս լինելու դեպքում տեղեկատվություն տնօրինող մարմինն այդ մասին պարտավոր է հայտնել դիմողին՝ «... հնարավորության դեպքում նրան տրամադրել նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը»: Հայցադիմումի պատասխանի բովանդակությունից ակնհայտ է որ տվյալ դեպքում Ծառայությունն իմացել է, թե որ մարմինն է տնօրինում Կազմակերպության խնդրած տեղեկությունների մաս կազմող Համաձայնագրի պատճենը, ունեցել է իրենց այդ մասին հայտնելու հնարավորություն, սակայն հարցումների պատասխան գրություններով դա չի արել, ինչը ոչ իրավաչափ է: Ուստի, այս առումով նույնպես Ծառայությունը խախտել է Կազմակերպության տեղեկատվության ազատության իրավունքը: Հայցադիմումով, ինչպես նաև դատաքննության ընթացքում իրենք նշել են, որ հիմնավոր հղումով (խնդրվող տեղեկությունը չունենալու մասին հայտնելու և տեղեկությունը տնօրինողի անունը նշելու վերաբերյալ) պատասխան տրամադրելու դեպքում Ծառայության պատասխանն իրենք կհամարեին պատշաճ պատասխան: Այս հանգամանքին Վարչական դատարանը չի անդրադարձել:

2.6.3. Եվ ավելին, Ծառայությունը ՀՀ արտաքին գործերի նախարարությունից ստացել և հայցադիմումի պատասխանին կից դատարանին է ներկայացրել նաև խնդրվող տեղեկությունների մաս կազմող Համաձայնագրի պատճենը: Ակնհայտ է, որ ԱԱԾ-ն Համաձայնագրի պատճենը ՀՀ արտաքին գործերի նախարարությունից ստացել է օրենքի և իր իրավազորությունների շրջանակում: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի իմաստով, տեղեկություն ստանալու հարցումը դիմում է: Իսկ Ծառայության պատասխան գրությունը, նույն օրենքի 53-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով, վարչական ակտ է, հանդիսանում է վարչարարության արդյունք: Նման իրավական դիրքորոշում հայտնել է Վարչական դատարանը թիվ 1564/05/08 գործով 17.07.2008 թվականի վճռում, ըստ որի, «Վարչական դատարանը գտնում է, որ Երևանի քաղաքապետի տեղակալի 11.12.2007թ. թվի 02/18-Ա- 3479 գրությունը հանդիսանում է վարչարարության արդյունք, հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով այն ունի ուղղակի նշանակություն և գրվել է հենց այդ նպատակով, ուղղված է հասցեատիրոջ՝ Վ. Այվազյանի, համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, ունի արտաքին ներգործություն: Նման պայմաններում վարչական դատարանը գտնում է, որ չնայած այն հանգամանքին, որ հայցվորին տրամադրվել է ընդամենը գրություն, սակայն իր բովանդակային առումով այն համարվում է վարչական ակտ, և դրա կայացումը բխել է վարչական մարմնի վարչարարության իրավազորություններից»: Նմանապես, Ծառայության պատասխան գրությունները թեև կարող են չպարունակել վարչական ակտի համար օրենքով սահմանված հատկանիշներ, սակայն բովանդակային առումով դրանք վարչական ակտեր են, և դրանց կայացումը բխել է Ծառայության վարչարարության իրավազորություններից: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, «եթե դիմումը ներկայացվել է ոչ իրավասու վարչական

մարմին, ապա դիմումն ստացած վարչական մարմինը եռօրյա ժամկետում դա վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին՝ ծանուցելով դիմողին»: Դետևաբար, Ծառայությունն ուներ և իրավական, և իրական բոլոր մեխանիզմները Կազմակերպության հարցումներով խնդրված Զամաձայնագրի պատճենն իրենց տրամադրելու համար, ինչը հավաստվում է նրանով, որ Ծառայությունն այդ փաստաթուղթը ներկայացրել է դատարանին: Նման պայմաններում Զամաձայնագրի պատճենը տրամադրելը բխում է նաև իրապարակայնության և տեղեկատվության մատչելիության սկզբունքներից, սակայն Ծառայությունը ոչ միայն չի տրամադրել Զամաձայնագրի պատճենը, այլ նաև պատասխան գրություններով չի նշել այն տնօրինողի անունը, այնինչ, փաստացի իմացել է տեղեկությունը տնօրինողի մասին, ստացել է նրանից տեղեկությունը և տրամադրել է դատարանին: Այս առումով ևս Ծառայության գործողություններն իրավաչափ չեն, այդ մասին նշվել է դատարանում, այս հանգամանքին վարչական դատարանը չի անդրադարձել:

2.6.4. Զայաստանի Զանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (նկատի ունի բողոքի ներկայացման ժամանակահատվածում գործող օրենսգիրքը, այսուհետև՝ ՎԴ օրենսգիրք) 83-րդ հոդվածի 3-րդ կետի 4-րդ մասը սահմանում է, որ հայցադիմումի պատասխանը պետք է պարունակի հայցադիմումի պատասխանը և «... կից փաստաթղթերը հայցվորին և գործին մասնակցող այլ անձանց՝ փաստաթղթերի հատուկ առաքման կարգին համապատասխան ուղարկելը հավաստող ապացույցները»: Այսինքն՝ իրենց պետք է ներկայացվեին նաև հայցադիմումի պատասխանին կից փաստաթղթերը: Սակայն, ի խախտումն վերոհիշյալ դրույթի, Ծառայությունը հայցադիմումի պատասխանին կից փաստաթղթերը, այդ թվում՝ Զամաձայնագրի պատճենը, ԶԶ արտաքին գործերի նախարարությունից ստանալուց հետո չի ներկայացրել իրենց: Անգամ դատավարական վերոնշյալ նորմի ուժով Ծառայությունը պարտավոր էր տրամադրել Զամաձայնագրի պատճենը, ինչը չի արել: Այդ մասին նշվել է դատարանում, սակայն դատարանը դրան չի անդրադարձել:

2.7. Վարչական դատարանը Վճռում նշել է. «ԶԶ Սահմանադրության 27.1-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

«Տեղեկատվության ազատության մասին» ԶԶ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:

Նույն օրենքի 12-րդ հոդվածի համաձայն, տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝ 1) ապահովել տեղեկությունների մատչելիությունը և իրապարակայնությունը. 2) իրականացնել իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունների գրանցումը, դասակարգումը և պահպանումը. 3) տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն. 4) սահմանել իր կողմից բանավոր և (կամ) գրավոր տեղեկությունների տրամադրման կարգը. 5) նշանակել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին:

Նշված իրավանորմերից հետևում է, որ թեև օրենքով յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը, այդուհանդերձ, փնտրվող տեղեկատվությունն ստանալու համար անհրաժեշտ է դիմել այն իրավասու մարմնին, որը տնօրինելիս կլինի փնտրվող տեղեկատվությունը, քանի որ փնտրվող տեղեկատվությունը տրամադրվում է այն տնօրինողի կողմից:

... ինչպես նշվեց, փնտրվող տեղեկատվությունն ստանալու համար անհրաժեշտ է դիմել այն իրավասու մարմնին, որը տնօրինելիս կլինի փնտրվող տեղեկատվությունը»:

2.7.1. Եթե վերոնշյալ մեկնաբանությամբ վարչական դատարանը գտել է, որ յուրաքանչյուր դեպքում առաջին անգամ տեղեկություն ստանալու հարցմամբ տեղեկություն տնօրինողին դիմելիս դիմողը պարտավոր է և պետք է հստակորեն իմանա, որ հենց տվյալ մարմինն է տնօրինում իր փնտրած տեղեկությունը, իսկ իրենք պետք է ի սկզբանե չդիմեն Ծառայությանը, ապա գտնում են, որ դատարանը սխալ է մեկնաբանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները հետևյալ պատճառաբանությամբ: Տեղեկատվության ազատության իրավունքը հիմնարար իրավունք է և պատկանում է բոլորին՝ անկախ մասնագիտությունից, մասնագիտացումից, կրթական մակարդակից կամ պետական համակարգի վերաբերյալ գիտելիքներից: Դրա համար Օրենսդիրը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում հաշվի է առել դիմողի՝ սխալվելու հնարավորությունը՝ տեղեկություն տնօրինողի առջև դնելով իմպերատիվ պահանջ՝ խնդրվող տեղեկությունը չտնօրինելու կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս լինելու դեպքում այդ մասին հայտնել դիմողին, ուղղորդել նրան՝ հնարավորության դեպքում հայտնելով, թե ով է տնօրինում դիմողին անհրաժեշտ տեղեկությունները: Սա ամրագրված է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ կետերում: Այս սկզբունքն ամրագրված է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետում, որն իմպերատիվ պահանջ է դնում վարչական մարմնի դեմ արդեն ոչ թե հղումով պատասխանել դիմողին, այլ սեփական նախաձեռնությամբ վերահասցեագրել դիմումն իրավասու վարչական մարմնին՝ ծանուցելով դիմողին: Բացի այդ, բազմաթիվ են տեղեկությունները, որոնց բնույթը և պատկանելիությունը միանշանակ հստակ չէ և չի էլ կարող լինել յուրաքանչյուրի համար, (օրինակ, առողջությանը վնաս պատճառող սննդի մասին կամ նմանատիպ տեղեկատվության տրամադրումը վերաբերում է սննդամթերքի անվտանգության պատասխանատու մարմիններին, թե՛ առողջապահության ոլորտի պատասխանատուներին, կամ հանրակրթական դպրոցների մասին տեղեկատվության տրամադրումը վերաբերում է Կրթության և գիտության նախարարությանը, թե՛ տեղական ինքնակառավարման մարմիններին, կամ՝ մարզպետարաններին, կամ՝ Երևանի քաղաքապետարանին և այլն): Արդյունքում, տեղեկություն ստանալու սահմանադրական իրավունքի իրացումը չպետք է և չի էլ ստորադասվում այն հանգամանքին, որ դիմողը հստակ չի պատկերացրել, թե ում պետք է դիմել: Ուստի, գտնում են, որ դատարանի մնաց մեկնաբանությունը չի բխում օրենքից և իրավունքից:

2.7.2. Եթե վերոնշյալ մեկնաբանությամբ վարչական դատարանը գտել է, որ տվյալ դեպքում Կազմակերպությունը Ծառայությանը տեղեկություն ստանալու հարցումներով իրավաչափորեն դիմելուց հետո այլևս չպետք է դատարանում պահանջեր պարտավորեցնել Ծառայությանը տրամադրել տեղեկություններ, ապա գտնում են, որ դատարանը սխալ է մեկնաբանել Հայցվորի դիրքորոշումն ու պահանջները հետևյալ պատճառաբանությամբ: Հայցի 4.1.-4.6. կետերում իրենք հստակորեն նշել են, իսկ գործի քննության ընթացքում բանավոր ամրագրել, որ Կազմակերպության համար իրավաչափ, սպառիչ և պատշաճ պատասխան կհամարվեր ինչպես բովանդակային ըստ էության պատասխանը, այնպես էլ հիմնավոր մերժումը՝ մերժման հիմքերի առկայության դեպքում, հիմնավոր հղումով պատասխանը՝ Ծառայության կողմից տեղեկությունը չունենալու կամ դրա տրամադրումն իր լիազորություններից դուրս լինելու դեպքում: Այդ մասին հստակորեն նշված է նաև հայցի 4.4. կետում:

2.8. Գտնում են, որ վերոնշյալ յուրաքանչյուր դեպքում դատարանը չի գնահատել Ծառայության պատասխանի համապատասխանությունը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին, իր եզրահանգումները կայացնելիս հաշվի չի առել հայցադիմումում նշված և գործի քննության ընթացքում ներկայացված Հայցվորի դիրքորոշումը, ինչն էական ազդեցություն է ունեցել գործի ելքի վրա:

Պահանջել է, ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածներով, Կոնվենցիայի 6-րդ, 13-րդ հոդվածներով, ՎԴ օրենսգրքի 19.1-րդ գլխի, 125-րդ հոդվածի պահանջներով՝ ամբողջությամբ բեկանել և փոփոխել հայցը

մերժելու մասին Վճիռը և կայացնել նոր՝ հայցն ամբողջությամբ բավարարելու մասին դատական ակտ:

3. Գործին մասնակից անձանց պատասխանը բողոքին, դիրքորոշումը և հիմնավորումները

Ծառայությունը, բերված պատասխանով առարկելով բողոքին, այդ կապակցությամբ ներկայացրել է հետևյալ հիմնավորումները:

Հայցվորի ներկայացուցչի վերաքննիչ բողոքում բերված նույնաբովանդակ հարցադրումների պատասխանը տրված է Ծառայության 13.05.2013 թվականի № 11/339 հայցադիմումի պատասխանում և այդ կապակցությամբ Ծառայության դիրքորոշումը մնում է անփոփոխ:

Սույն գործով Վարչական դատարանի եզրահանգումներն այն մասին, որ Ծառայությունն օրենքով սահմանված կարգով չէր կարող տրամադրել փնտրվող տեղեկատվությունը, հիմնավոր է, քանի որ Հայցվորին պատասխանելիս Համաձայնագիրն ուժի մեջ չէր մտել (և այժմ նույնպես ուժի մեջ չի մտել) և «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների համաձայն, ՀՀ կառավարությունը Ծառայությանն այդ առումով իրավասու մարմին նշանակելու մասին որոշում չի կայացրել: Հետևաբար, Սահմանադրության 5-րդ հոդվածի պահանջների համաձայն, Ծառայությունը համաձայնագրով որևէ գործողություն կատարելու լիազորություն չուներ և այժմ նույնպես չունի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՎԴ օրենսգրքի 15-րդ և 117-րդ հոդվածներով՝ վերաքննիչ դատարանից խնդրում է բողոքը մերժել՝ Վճիռը թողնելով անփոփոխ:

II. ՊԱՏՃԱՌԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Վերաքննիչ դատարանի վերլուծությունը և եզրահանգումները

Վերաքննիչ դատարանը հարկ է համարում նշել, որ սույն բողոքի քննության ընթացքում 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, ընդունվել և 2014 թվականի հունվարի 7-ին ուժի մեջ է մտել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը (այսուհետև, ի տարբերություն մինչ այդ գործող ՎԴ օրենսգրքի, որպես համառոտագրում, նոր օրենսգիրքը պայմանականորեն կանվանենք Վարչ.դատ.օրենսգիրք): Վարչ.դատ.օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին մասով (նույնաբովանդակ է եղել ՎԴ օրենսգրքի 117¹²-րդ հոդվածի 1-ին մասը) սահմանված է. «Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքում ներկայացված պահանջի սահմաններում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ բողոքն ըստ էության քննելու համար»: Այդ տեսանկյունից ուսումնասիրելով գործի նյութերը, բողոքով ներկայացված հիմք-հիմնավորումները, բողոքի պատասխանով բերված առարկությունը բողոքին և դրա հիմնավորումները, Վարչական դատարանի՝ Վճռում շարադրված վերլուծությունն ու ստացված եզրահանգումները՝ վերաքննիչ դատարանը եզրահանգում է, որ բողոքով ներկայացված պահանջը ենթակա է բավարարման մասնակի կարծելով գործի վարույթը, հետևյալ հիմնավորմամբ:

Հայցով ներկայացված է հիմնական մի պահանջ և դրանից ածանցվող պահանջներ: Հիմնական պահանջը վերաբերում է Կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով երաշխավորված տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքների խախտման փաստը ճանաչելուն: Իր բովանդակությամբ դա դասվում է ճանաչման հայցատեսակին (տես, ՎԴ օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասը, ընդ որում, նույնաբովանդակ է Վարչ.դատ.օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասը): Ածանցյալ պահանջները վերաբերում են Կազմակերպության 11.02.2013 թվականի թիվ 194-4 և 07.03.2013 թվականի թիվ 194-8 տեղեկություն ստանալու գրավոր հարցումներով

փնտրվող սպառիչ տեղեկատվություն տրամադրելուն ծառայությանը պարտավորեցնելուն և իրենց բովանդակությամբ դասվում են գործողության կատարման հայցատեսակին: Ածանցյալ պահանջների ներկայացումը սույն գործով այցադիմումը ներկայացնելու ժամանակահատվածում սահմանված է եղել ՎԴ օրենսգրքի 70-րդ հոդվածի (նույնաբանական է Վարչ.դատ.օրենսգրքի 71-րդ հոդվածը) հետևյալ պահանջով. «Վիճարկման, պարտավորեցման, գործողության կատարման կամ ծանաչման հայցի հետ կարող է ներկայացվել պահանջ այն հետևանքները վերացնելու մասին, որոնք առաջացել են վիճարկվող վարչական ակտի կամ վիճարկվող գործողության (անգործության) կամ վարչական ակտ ընդունելը մերժելու կամ վարչական ակտ չընդունելու հետևանքով»: Այս դրույթից հետևում է, որ հիմնական պահանջի լուծումը կանխորոշում է ածանցյալ պահանջների լուծումը, այսինքն՝ հետևանքների վերացման ածանցյալ պահանջը (կամ պահանջները), ինքնուրույն առանց դրա ներկայացման համար հիմք հանդիսացած հիմնական պահանջը քննության առարկա դարձնելու, չի կարող քննության առարկա լինել: Տվյալ դեպքում Վերաքննիչ դատարանը գտնում է, որ ներկայացված վերոնշյալ հիմնական պահանջը (հետևաբար՝ նաև ածանցյալ պահանջները) ենթակա չէ Վարչական դատարանում քննության հետևյալ հիմնավորմամբ:

Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք:

Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Դատական պաշտպանության իրավունքի իրականացումը հիմնված է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքի վրա, որն անձի՝ օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական ու դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները, այսինքն՝ անձն ինքն է որոշում իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար դիմել, թե չդիմել դատարան, իրականացնել, թե չիրականացնել իր դատական պաշտպանության իրավունքը, ինքնուրույն որոշել հարուցված հայցով իր պահանջների առարկան, ծավալը, հիմքը և այլն:

Անձն իր դատական պաշտպանության հիմնարար իրավունքն իրացնելիս, ինչպես նաև դատարաններն արդարադատություն իրականացնելիս պետք է առաջնորդվեն տվյալ դատական պաշտպանության ձևի համար օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հանրային իրավահարաբերություններում իրավունքների դատական պաշտպանությունն իրականացվում է վարչական դատավարության կարգով՝ հանրային իրավահարաբերություններում իրավունքների դատական պաշտպանության ձևին համապատասխան:

Վարչական դատարանում, Վերաքննիչ դատարանում և Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական և նորմատիվ ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը սահմանում է ՎԴ օրենսգրքը (տես, 1-ին հոդվածը): Այստեղ և ստորև հիմնական հոդումները կկատարվեն այդ օրենսգրքին համապատասխան, քանի որ հայցադիմումը ներկայացվել է այդ օրենսգրքի գործողության ժամանակահատվածում: Դա կարվի վերլուծության շարադրանքի պարզությունն ապահովելու համար, միայն հարկ է նշել, որ նույնանման կարգավորումներ են սահմանված նաև Վարչ.դատ.օրենսգրքով:

ՎԴ օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ այդ օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով,

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն,

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

ՎԴ օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն, վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա:

Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ Օրենսդիրը, սահմանելով պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը վարչական դատարանում, ամրագրել է նաև տվյալ դատարանում այդ իրավունքի իրականացման ձևը՝ հայց հարուցելը:

Սիսթեմանակ, անձը տնօրինչականության սկզբունքի հիման վրա դատական պաշտպանության իրավունքն իրացնելիս պետք է առաջնորդվի տվյալ դատական պաշտպանության ձևի համար օրենսդրությամբ սահմանված կանոններով, մասնավորապես՝ ընդդատություն (ենթակայություն), հայց հարուցելու կանոններ և այլն:

Այսպես, ՎԴ օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն, վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը: Վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված գործերը, քրեական վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը, ընդհանուր իրավասության կամ քրեական դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, սնանկության վարույթում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը:

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, վարչական դատարանն ըստ էության քննում է վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված վարչական գործերը:

ՎԴ օրենսգրքի 65-րդ, 66-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածների համաձայն, վարչական դատարանում հարուցվող հայցերի տեսակներն են՝ «վիճարկման հայցը», որով հայցվորը կարող է պահանջել ամբողջությամբ կամ մասամբ վերացնել կամ փոփոխել միջամտող վարչական ակտը, «պարտավորեցման հայցը», որով հայցվորը կարող է պահանջել ընդունելու այն բարենպաստ վարչական ակտը, որի ընդունումը մերժվել է վարչական մարմնի կողմից, կամ որը նա չի ընդունել, «գործողության կատարման հայցը», որով հայցվորը կարող է պահանջել կատարելու որոշակի գործողություններ՝ կամ ձեռնպահ մնալու այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը և «ճանաչման հայցը», որով հայցվորը կարող է՝

1. պահանջել ճանաչելու որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել սույն օրենսգրքի 65-67-րդ հոդվածներին համապատասխան,

2. պահանջել ճանաչելու վարչական ակտի առոչինչ լինելը,

3. պահանջել ոչ իրավաչափ ճանաչելու այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ գործողությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝

1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ,

2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում, կամ՝

3) դա նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Փաստորեն, ՎԴ օրենսգրքով սպառիչ ցանկով սահմանված են այն բոլոր հայցատեսակները, որոնց հիման վրա կարող են հարուցվել վարչական գործեր, ընդ որում, հայցերի՝ ըստ տեսակների տարանջատումը պայմանավորված է հայցվորի կողմից հայցով ներկայացվող պահանջով:

Վերը շարադրված իրավանորմների համադրված վերլուծությունից հետևում է, որ տվյալ դեպքում տնօրինչականության սկզբունքի հիման վրա վարչական դատավարության կարգով դատական պաշտպանության իրավունքն իրացնելիս անձը պետք է առաջնորդվի նաև Օրենսդրի կողմից տվյալ դատական պաշտպանության ձևի համար սահմանված կանոններով: Վարչական դատավարության կարգով դատական պաշտպանության իրավունքն անձի կողմից չի կարող իրացվել կամայականորեն, այլ այն պետք է զուգորդվի դատական պաշտպանության իրավունքն իրացնող անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության նպատակի հետ, և վեճը պետք է պայմանավորված լինի պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց այն վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ, որոնք խախտել են կամ անմիջականորեն կարող են խախտել իրավաբանական (ֆիզիկական) անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, որոնց պաշտպանության, վերականգնման նպատակով և անձը ներկայացնում է վարչական դատարանում վարչական գործի վարույթ հարուցելու համար հիմք հանդիսացող համապատասխան հայցը՝ «վիճարկման» և/կամ «պարտավորեցման» և/կամ «գործողության կատարման» և/կամ «ճանաչման» հայցերը: Այսինքն՝ վարչական դատավարության կարգով անձն ազատ չէ ընտրելու, թե ինչ հայցապահանջ ներկայացնել, այլ այն պետք է բխի հանրային իրավահարաբերություններից, ուղղված լինի այդ իրավահարաբերություններում անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանը և լինի ՎԴ օրենսգրքով նախատեսված, օրենսգրքի 65-68-րդ հոդվածներով սահմանված հայցատեսակներով ներկայացվող պահանջներից որևէ մեկը, իսկ, հակառակ պարագայում, ՎԴ օրենսգրքով չնախատեսված պահանջով ներկայացված հայցը վարչական դատարանում քննության ենթակա չի լինի, քանի որ դրա քննարկումը և դրա արդյունքում համապատասխան լուծումը դուրս է վարչական դատարանի իրավասություններից:

Ինչպես նշվեց վերևում, Հայցվորի կողմից ներկայացված հիմնական պահանջն իր բովանդակությամբ դասվում է ճանաչման հայցատեսակին, որի բնութագիրը տրված է ՎԴ օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասով: Դրանով սահմանված է, որ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչելու որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել սույն օրենսգրքի 65-67-րդ հոդվածներին համապատասխան:

Այսինքն՝ վարչական դատավարության կարգով դատական պաշտպանության իրավունքի իրացման նպատակով, Օրենսդրի կողմից ամրագրված կանոններին համապատասխան, անձը վարչական դատարան կարող է ՎԴ օրենսգրքի 68-րդ հոդվածի

1-ին մասով սահմանված ճանաչման հայց ներկայացնել միայն այն դեպքում, եթե նա չի կարող նույն օրենսգրքի 65-67-րդ հոդվածներով սահմանված հայց ներկայացնել, այն է՝ նման ճանաչման հայց ներկայացնելու համար Օրենսդիրը սահմանել է նախապայման, որ այդ հայցը կարող է ներկայացվել միայն այն դեպքում, երբ հնարավոր չէ հայցվորի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն իրականացնել, այն է՝ խախտված իրավունքը վերականգնել ՎԴ օրենսգրքով սահմանված «վիճարկման», «պարտավորեցման» և/կամ «գործողության կատարման» հայցատեսակների ներկայացմամբ:

Տվյալ դեպքում, Վերաքննիչ դատարանը փաստում է, որ Հայցվորի՝ վարչական դատավարության կարգով դատական պաշտպանության իրավունքի իրացման նպատակն ուղղված է տեղեկատվություն ստանալու իրավունքի ենթադրյալ խախտման վերականգնմանը և, դրանից ելնելով, գտնում է, որ Հայցվորը գրված չի եղել վարչական դատավարության կարգով տվյալ իրավահարաբերություններում իր սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն իրականացնել ՎԴ օրենսգրքի 65-67-րդ հոդվածներով, մասնավորապես, 67-րդ հոդվածով սահմանված «գործողության կատարման» հայց ներկայացնելու միջոցով, ինչն ինքնին, սահմանված կանոնակարգումների համաձայն, բացառում է ՎԴ օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ճանաչման հայց ներկայացնելու և ներկայցված հայցը վարչական դատարանում քննելու հնարավորությունը: Ուստի, ներկայացված հիմնական պահանջը ենթակա չէ վարչական դատարանում քննության: Ընդ որում, իրավահարաբերությունը տվյալ դեպքում ունի հանրային բնույթ, ուստի, ներկայացված հիմնական պահանջը ենթակա չէ նաև այլ դատարանում քննության: Վերևում բերված հիմնավորմամբ դա վերաբերում է նաև ածանցյալ պահանջներին:

Վարչ.դատ.օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, վարչական դատավարությունն իրականացվում է գործի քննության ժամանակ գործող օրենքով, իսկ նույն օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարծում է գործի վարույթը, եթե վեճը ենթակա չէ որևէ դատարանում քննության: Հետևաբար, սույն գործի վարույթը ենթակա է կարճման, այսինքն՝ բողոքը ենթակա է մասնակի բավարարման: Ստացված եզրահանգումը համապատասխանում է Վարչ.դատ.օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված լիազորությանը:

Ստացված եզրահանգումների պարագայում Վերաքննիչ դատարանը վերացած է համարում բողոքի հիմք-հիմնավորումներին ու բողոքի պատասխանի հիմնավորումներին անդրադառնալու դատավարական անհրաժեշտությունը:

2. Անդրադառնալով բողոքի քննության առնչվող դատական ծախսերի բաշխման հարցին և ղեկավարվելով Վարչ.դատ.օրենսգրքի 146-րդ հոդվածով՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ գործով որևէ դատական ծախսի կատարում չի արձանագրված: Իսկ հայցադիմումի և բողոքի համար պետական տուրքերը դեռևս գանձված չեն, քանի որ կազմակերպության միջնորդությունների բավարարման արդյունքում դրանց վճարման ժամկետները հետաձգվել են: Ներկայումս, սակայն, դրանք գանձման ենթակա չեն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի առաջին պարբերության «գ» կետի ուժով: Ուստի, դատական ծախսերի բաշխման հարցը համարվում է լուծված:

III. ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ՄԱՍ

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Վարչ.դատ.օրենսգրքի 96-րդ, 145-րդ, 146-րդ, 148-րդ, 153-րդ, 156-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը՝

ՈՐՈՇԵՑ

1. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության վերաքննիչ բողոքը բավարարել մասնակի՝ ամբողջությամբ բեկանել N^o ՎԴ/2534/05/13

վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի վճիռը և վարչական գործի վարույթը կարճել:

Մնացած մասով վերաքննիչ բողոքը մերժել:

2. Դատական ծախսերի բաշխման հարցը համարել լուծված:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և մինչ այդ կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ
Ա. ԱՐՈՎՅԱՆ



ԴԱՏԱՎՈՐ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ



ԴԱՏԱՎՈՐ
Ա. ԴԱՐԻՔՅԱՆ



ԳՐԱՌՈՒՄ ԴԱՏԱՎԱՆ ԱԿՏԻ ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(սույն գրառումն ուժի մեջ է դատավորի ստորագրությամբ և կնիքով վավերացված լինելու դեպքում)

№ ԿԴ/2534/05/13 վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական վերաքննիչ դատարանի սույն որոշումն օրենքով սահմանված կարգով մտել է օրինական ուժի մեջ

.....
(տարեթիվը, ամիսը, օրը)